

ԼԵԶՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔ Է

# ՀՀԻ-Ն՝ ՍՓՅՈՒՌՔԻ ԿՈՂՔԻՆ. ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎ

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը գնահատում է հայրենիքի սահմաններից դուրս հայաստանու ազգանվեր գործունեություն ծավալող մանկավարժների աշխատանքը իր աջակցությունը հայտնելով նրանց մասնագիտական կարողությունները, հմտությունները զարգացնելու գործում: Մեր օրերում հայագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչների համար վերապատրաստման դասընթացի անհրաժեշտությունը մեծանում է հատկապես այն համայնքներում, որոնց կրթական հաստատություններում կատարվում է հայագիտական առարկաների կրճատում կամ իսպառ դուրսհանում պայմանավորված ուսուցիչների համապատասխան որակավորման բացակայությամբ և այլ հանգամանքներով: Դասընթացը մի կարևոր քայլ է, որը կարող է որոշակիորեն կանխել այդպիսի խոչընդոտների առաջացումը և պայքարի որոշակի միջոց դառնալ հայագիտությունը հայրենիքից դուրս տարածելու ու զարգացնելու:



ուղղում ունի. մի կողմից մանկավարժների համար իրականացվում է տեսական, գիտելիքների ընդլայնում, մյուս կողմից ուսուցման գործնական հմտությունների ձեռքբերում:

Դասընթացի ավարտին ուսուցիչները ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կողմից ստացան որակավորման վկայագրեր, ինչպես նաև գրքեր, որոնք նրանց կարող են օգտակար լինել ուսուցման գործընթացում:

Բացի վերապատրաստման դասընթացներից կազմակերպվեցին նաև առանձին դասախոսություններ ԴՀԵՄ-ի անդամների համար: Հունիսի 7-ին «Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման նախադրյալները» թեմայով դասախոսություն կարդաց պատմաբան Մհեր Հովհաննիսյանը: Հայրենասիրական ոգով համակված բազմաթիվ երիտասարդներ համակ ուշադրությամբ լսեցին դասախոսու-

անդրադառնալով մասնավորապես այն գրողների ստեղծագործական կյանքին, որոնք իրենց գործունեությունը ծավալել են Դոնի Ռոստովում, Ռոսաստանի այլ քաղաքներում, հայրենիքի սահմաններից դուրս շարունակել են նպաստել իրենց երկրի ու ժողովրդի բարօրությանը: Հետաքրքիր հարցադրումներով երիտասարդները քննարկեցին գրականության դերը հայրենասիրական գաղափարների ձևավորման ու տարածման գործում:

Նմանօրինակ ծրագրերը կարևոր առաքելություն ունեն, քանի որ նպատակաուղղված են ՀՀ սահմաններից դուրս հայագիտական առարկաների դասավանդման գործընթացի ընդլայնմանն ու զարգացմանը: Ռոսաստանում հայագիտական առարկաների ուսուցման գործընթացն իրականացվում է բազմաթիվ խնդիրների հաղթահարմամբ, որոնց շարքում առաջնահերթ է նշված առարկաներին հատկացվող ժամաքանակի կրճատման հարցի լուծումը: ԵՊՀ-ի կողմից ուսուցիչներին համապատասխան որակավորում շնորհելը

## Խորհրդածողով Կրասնոդարի «Արմատ» դպրոցում

Մայիսի 19-ին և 20-ին Հարավային Ռոսաստանի հայոց թեմի «Արմատ» դպրոցում կայացավ հայոց լեզվի և մշակույթի ուսուցիչների 2-րդ խորհրդածողովը, որի նպատակն էր ավանդական դարձող ամենամյա խորհրդակցությունների և թեմական միջոցառումների արդյունքում «Վարդանյան» կենտրոնը դարձնել թեմի բոլոր աշակերտների և ուսուցիչների համար հայկական կրթությունն ու մշակույթը կոորդինացնող և զարգացնող դաշտ, թեմի բոլոր կիրակնօրյա դպրոցներում ուսուցողական և մշակույթային գործընթացները իրականացնել



համատեղ, վերահսկելի ծրագրերով, ձևավորել և զարգացնել ներթեմական կապեր, համախմբվածություն եկեղեցու, հավատի, բնդհանուր հայրենասիրական իդեալների, ազգային գաղափարախոսության շուրջ, տեսանելի դարձնել հայեցի կրթության դժվարություններն ու խոչընդոտները և հնարավորինս օգնել դրանց հաղթահարմանը:

«Արմատ» դպրոցը արդեն 11 տարի է, ինչ զբաղվում է հարյուրավոր հայ մանուկների ու երիտասարդների կրթությամբ ու հայեցի դաստիարակությամբ: Բացի հայոց լեզու, գրականություն, հայ ժողովրդի պատմություն, առարկաներից, «Վարդանյան» կենտրոնում ուսուցանում են նաև հայկական երգ ու պար, նկարչություն, անգլերեն, հայկական խոհանոցի գաղտնիքներ,



շախմատի, ժողովրդական նվագարանների և թատերական խմբակներ ևս:

Խորհրդակցության աշխատանքներին մասնակից էին ՀՀ կրթության և գիտության նախարարության Սփյուռքի հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ Թամարա Զալինյանը, ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտի հայագիտական և սոցիալ-մշակութային առարկաների բաժնի մասնագետ Թամարա Թովմասյանը, ՀԱԵ հոգևորականներ, 25 կրթական կազմակերպություններ ներկայացնող 45 ուսուցիչ: Ռոստովի մարզի պատվիրակներն էին հայոց լեզվի ուսուցիչներ Սոնա Կարապետյանը, Լուսինե Պետակյանը, Ռուզաննա Կարապետյանը և Արմինե Ղազարյանը:

Միջոցառմանը իր ողջունի խոսքով հանդես եկավ «Վարդանյան» կրթամշակութային կենտրոնի տնօրեն ավագ քահանա տեր Մարգար Թաջյանը՝ նշելով, որ սփյուռքի մեջ ազգապահպանման առաջին նախադրյալը հայերեն մտածելն ու խոսելն է:

Ուսուցիչների թեմական 2-րդ խորհրդածողովը գոհացրեց բոլոր մասնակիցներին իր ծրագրային ելույթներով, կառուցողական գեկուցումներով և արդյունավետ քննարկումներով: Մանկավարժները հնարավորություն ունեցան ներկայացնելու իրենց կրթական օղակը, աշխատանքի պայմանները և առաջարկությունները:

**Հարավային Ռոսաստանի հայոց թեմ**

Վերապատրաստման հերթական ծրագիրը կյանքի կոչվեց ՌԴ Դոնի Ռոստով քաղաքում: Շուրջ տասը ուսուցիչներ հունիսի 5-16-ը հնարավորություն ստացան մասնակցելու «Հայոց լեզվի, գրականության և հայոց պատմության դասավանդման հիմնախնդիրներ» մասնագիտական որակավորման 72-ժամյա դասընթացին:

Վերապատրաստման դասընթացը Դոնի Ռոստովի Նոր Նախիջևան հայկական



համայնքի հետ համագործակցությամբ անցկացրին ԵՊՀ դասախոսները Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն, Հայոց պատմության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մհեր Հովհաննիսյանը և Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Մերի Հովհաննիսյանը: Կարելի էր համարում նշել, որ ծրագրի իրականացման հարցում մեծ աջակցություն ցուցաբերեց համայնքի նախագահ Հարություն Մուրմալյանը: Մեզ հետ կազմակերպչական ողջ բեռը ստանձնեցին համայնքի գործադիր տնօրեն Մերգեյ Սալադովը, «Դոնի հայերի երիտասարդների միություն» (ԴՀԵՄ) նախագահ Գևորգ Գրիգորյանը, համայնքի ներկայացուցիչ Քրիստինե Պլուզյանը:

Վերապատրաստման դասընթացին մասնակից ուսուցիչները համալրեցին իրենց տեսական գիտելիքները, գործնական աշխատանքների միջոցով ձևավորեցին նաև մասնագիտական հմտություններ հաղորդակից լինելով հայոց լեզվի, գրականության և հայոց պատմության ուսուցման ժամանակակից մեթոդներին, ուսուցման կազմակերպման ձևերին ու հնարներին: Այսինքն վերապատրաստման դասընթացը երկկողմանի նպատակա-



թյունը, որն ամփոփվեց նրանց կողմից հնչեցրած հետաքրքիր հարցադրումների պատասխաններով:

Հունիսի 11-ին Մերի Հովհաննիսյանը դասախոսություն կարդաց «Հայ գրականություն. 5-րդ դարից մինչև մեր օրերը»

կարևոր քայլ և աջակցություն է նշված հարցի լուծման ճանապարհին:

Հիշեցնենք, որ ծրագրի մեկնարկը տրվել է 2016 թ. Մոսկովում:

**ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ**